*Հավելված 7*
*ՀՀ ֆինանսների նախարարի << 02 >> օգոստոսի 2013թ.*
*թիվ 667-Ա հրամանի*

# *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2015 թվականի փետրվարի 18-ի թիվ 15/2 որոշմամբ և հրապարակվում է

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

## ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ՔԵՆԴԼ-ՊԸԱՊՁԲ-15/01

Պատվիրատուն՝ «ՔԵՆԴԼ» Սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամը, որը գտնվում է ք. Երևան, Հր. Աճառյան 31 հասցեում, ստորև ներկայացնում է ՔԵՆԴԼ-ՊԸԱՊՁԲ-15/01 ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգի հրավերի փոփոխության պատճառը (ները) և փոփոխության (ունների) համառոտ նկարագրությունը:

Փոփոխության պատճառ N 1: Հրավերի մաս I, կետ 2-ի՝ «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգի» ենթակետ 2.3-ով սահմանված, մասնակիցներին ներկայացված էր **«Տեխնիկական միջոցներ»** չափանիշի գնահատման համար **տվյալ գնումը** կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար ավելորդ, անհրաժեշտություն չներկայացնող պահանջներ:

Փոփոխության նկարագրություն: Մասնակիցների **«Տեխնիկական միջոցներ»** չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին»: Միաժամանակ, պարզեցվել է Հրավերի մաս II-ի կետ 2.2.5-ը, հետևյալ խմբագրությամբ՝ «Հայտարարություն (Հավելված N 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին»:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջներ:

Փոփոխության պատճառ N 2: Հրավերի մաս I, կետ 2-ի՝ «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգի» ենթակետ 2.3-ով սահմանված, մասնակիցներին ներկայացված էր **«Աշխատանքային ռեսուրսներ»** չափանիշի գնահատման համար **տվյալ**

**գնումը** կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար ավելորդ, անհրաժեշտություն չներկայացնող պահանջներ:

Փոփոխության նկարագրություն: Մասնակիցների **«Աշխատանքային ռեսուրսներ»** չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.4) պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին»: Միաժամանակ, պարզեցվել է Հրավերի մաս II-ի կետ 2.2.7-ը, հետևյալ խմբագրությամբ՝ «Հայտարարություն (Հավելված N 3.4) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին»:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջներ:

Փոփոխության պատճառ N 3: Հրավերի մաս 2, ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ-ում ընդգրկված էին **տվյալ գնումը** կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար անհրաժեշտություն չներկայացնող հավելվածներ 5.1 և 5.3-ը:

Փոփոխության նկարագրություն: Վերոհիշյալ ՑԱՆԿ-ից Հավելվածներ 5.1 և 5.3-ը հանվել են:

Փոփոխության հիմնավորում: **Տվյալ գնումը** կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար հավելվածներ 5.1 և 5.3-ը անհրաժեշտություն չեն ներկայացնում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Արծրուն Բաղրամյանին:

Հեռախոս՝ (+374)10-62 98 06;    (+374)91-77 88 98:

Էլ. փոստ՝ procurement@asls.candle.am

Պատվիրատու՝ «ՔԵՆԴԼ» Սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ